



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅ. 1  
ԲԱ 2.

# ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱԼ ՍՈՅԱՅԻ ՄԱՍԻՆ



---

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՐԴ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿՅԱ  
ԽՈՍԿՎ. 1931

1931

~~2128~~  
2128  
~~ФН~~  
136

633.3

գ-21

Գ. ԳԱՂ. ՎԵՐ

Հ 4 ՏԵՇ 2010

ԷԼՈՎ ՅԱՄ Ե

# ԻՆՉ ՊԵՏք Ե ԻՄԱՆԱԼ

## ՍՈՅԱՎՀԱ ՄԱՍԻՆ



Дублетный фонд  
госуд. библиотеки ССР  
им. В. И. Ленина

ԿԱԶԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՄՈՍԿՎԱ, 1931

ANUS 932

13 MAR 2013

18.964



Նկ. 1. Սոյալ.



Նկ. 2. Սոյալի դաշտը.

9636 - 84

I. ԻՆՉՈՒ ՀԱՐԿԱՎՈՐ Ե  
ՍՈՅԱ ՑԱՆԵԼ

1. Սոյալի հատիկից կարելի յեստանալ ուտելու համար պետքական մթերքներ, ինչպես որինակ՝ յուղ, ալյուր, բուսական կաթ, պանիր, սուրճ։ Նրա ալյուրը սննդատվության կողմից լիովին կարող ե փոխարինել մսին։ Կաթը չի տարբերվում կովի կաթից։ Սուրճը իր սննդատվությամբ գերազանցում ե իսկական սուրճին։

2. Սոյան բարձրացնում ե հողի բերրիությունը և մաքրում ե դաշտը անպետք խոտերից։



Նկ. 3. Սոյայի ծաղիկները

3. Սոյայից հետո հացահատիկների և ուրիշ կուլտուրաների շատ հաջող բերք ե լինում:

4

4. Սոյան լավ կեր ե տալիս անասունների համար թե կանաչ և թե չորացրած դրությամբ: Նրա ծղոտը և մանավանդ դարձմանը շատ սիրով ուտում են անասունները:

5. Սոյան պահանջկոտ չե հողի վերաբերմամբ և բավական լավ դիմանում ե յերաշտին:

6. Մի քանի շրջաններում սոյայի ցանսքը կարելի յե կատարել առանց հողը ցել անելու: Սոյան քաղելուց հետո նույն հողում կարելի յե աշնանացան անել:

Ահա ինչով ե գնահատելի սոյան և ի՞նչ արժանիքներ ունի իզուր չե, վոր սոյան հաղարավոր տարիների ընթացքում մշակվում

5

Ե հեռու Զինաստանում, վորտեղից մեզ մոտ Ե անցել նա: Զինաստանում սոյայի համար ոգտագործվում Ե հարմար հողի ամեն մի փոքրիկ կտորը: Տասնյակ միլիոնավոր մարդիկ այնտեղ միայն սոյայով են ապրում:

## II. ՎՈՐ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՍՈՅԱ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՑԱՆԵԼ

Սոյայի համար տաքություն Ե հարկավոր, այդ պատճառով ել նա աճում Ե վնչ ամեն տեղ:

Սոյան լավ կաճի Արմավիրի շրջանում, Կուբանի և Մայկոպի ավելի խոնավ շրջաններում, Հանքաջրերի ռայոնում, Հյուսիսային Կովկասի ավտոնոմ շրջաններում,

Ուկրայինայի անտառադաշտի հարավային մասում և Հեռավոր Արեւիլքի յերկրամասում, Արևմտյան Վրաստանում և Արևխաղիայում:


Մյուս շրջաններից սոյայի մշակման համար հարմար են Հյուսիսային Կովկասի մնացած համարյաբոլոր շրջանները, Կենտրոնական-Սևանող շրջանի հարավային մասը (Նախկին Վորոնեժի նահանգի), համարյա ամբողջ Ներքին Վոլգյան յերկիրը, Միջ-Վոլգյան շրջանի մի մասը (Նախկին Սամարայի ու Որենբուրգի նահանգ.), Ուկրայինայի շատ շրջաններ, Կազակստանի հարավային մասերում, Ուզբեկստանի ջրաշատ վայրերում և Կիրգիզիայի հյուսիսային մասերում:

Հարկավոր ե միայն այս  
բոլոր շըջաններում ցանել  
շուտ հասունացող տեսակ-  
ները:

### III. ՍՈՅԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՅԵՎ ՎՈՐՏԵՂ ՆՐԱՆՑ ՅԱՆԵԼ

Սոյայի շատ տեսակները կան:  
Իրանք բոլորը բաժանվում են  
յերեք կարդի. վաղ հասունացող  
(հասունանում են 90—110 որում),  
միջակ-վաղ (115—140 որում) և  
ուշ հասունացող (150 — 180  
որում): Վերջին տեսակները ավելի  
բերքատու յեն, բայց լինում են  
այն տեղերում, վորտեղ տաք  
յեղանակն ավելի յերկար ե շա-  
ռունակվում և վորտեղ ամառը

բավարար չափով խոնավություն  
կա: Սոյայի տեսակները տարբեր-  
վում են և իրանց գույնով: Ավելի



Նկ. 4. Սոյայի զանազան տեսակների և  
հատիկների ձեերը:

արժեքավորը — սպիտակ հատիկ  
ունեցող և դեղին հատիկ ունեցող  
տեսակներն են:

Սոյան շատ ժամանակ չե վոր  
յերևան ե յեկել մեզնում, դրա  
համար ել ամեն մի շրջանի հա-  
մար առանձին, հաստատուն կեր-  
պով վորոշված տեսակներ դեռ  
չկան: Վորպես ավելի լավերը,  
նշվում են հետևյալները.

1. Դոնի (հարավային մասի),  
Սալսկի (հարավ արևմտյան մասի),  
Կոքանի (հյուսիսային մասի) և  
Ստավրոպոլի շրջանների համար—  
№ 199 և 231a տեսակները:

2. Հանքային ջրերի շրջանում,  
Հյուսիսային կովկասի ավտոնում  
շրջանների լեռների առաջն ընկած  
տարածությունների համար—  
№ 231a, 118 և գունդուլի:

3. Արմավերի, Մայկոպի, Կու-  
բանի (բացի հյուսիսային մասից)  
շրջանների համար—№ 118, 231a,  
Խաբարովսկի 109, կարելի յե և  
գունդուլի:

4. Դոնեցկի, Շախտիի շրջան-  
ների համար—№ 199, կրուշուլ<sup>9/3</sup>:

5. Կենտրոնական-Սևահող շրջա-  
նի համար—կրուշուլ<sup>9/3</sup>:

6. Ներքին Վոլգյան շրջանի հա-  
մար—կրուշուլ<sup>9/3</sup> և Սարատովի  
ու Կրասնոկուտի տեսակները:

7. Ղրիմի համար—գունդուլի,  
№ 118:

8. Ուկրայինայի համար, ան-  
տառադաշտում—№ 199, 111,  
հին ուկրայինականը. հարավային  
տափաստաններում—231a, ման-


դարին, մինսոյ, հին-Ռւկրախնական  
տեսակներ:

Կազակստանի համար — խաբա-  
րովսկի տեսակը՝ № 109 և մասամբ  
գունջուլի:

Բայց բոլոր վերը հիշված տե-  
սակները մենք շատ քիչ քանակու-  
թյամբ ունենք: Հիմա սերմի կա-  
յարանները մեծ հոգատարությամբ  
ջոկում, մշակում և բազմացնում  
են լավ տեսակի սերմացուները:

Քանի դեռ չունենք բավակա-  
նաչափ համապատասխան տեսակի  
սերմացուներ, հարկավոր ե ցա-  
նելուց, առաջ ջոկել սերմացուներից  
լավագույնը:

Հարկավոր ե ջոկել հետեւյալ  
բույսերը.



Նկ. 5. ա) Սոյայի ճյուղը պատիճով.  
բ) Պատիճը բացված

1. Վորոնք շուտ են հասունա-  
նում:

2. Վորոնց պաճերը դուրս են  
գալիս բարձր ցողունի վրա:

3. Վորոնց պաճերը չեն ճաքում:

Զպետք ե յերբեք մոռանալ, վոր  
միայն համապատասխան տեսակը  
ցանելու դեպքում կարելի յե լավ  
բերք ստանալ, ուրեմն սոյայի  
սերմերը պետք ե ջոկել տեղին  
համապատասխան:

Անասունի կերի համար գործա-  
ծելու նպատակով (թե կանաչ և  
թն չորացրած վիճակում), սոյա  
կարելի յե ցանել նույնիսկ նաև  
ցուրտ յերկրում, ինչպես Մոսկվայի  
շրջանն եւ:

#### IV. ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՍՈՅԱՅԻ ՀԱՄԱՐ

1. Վարել անպատճառ աշնա-  
նից — ավելի լավ ե ոգոստոսի  
վերջը կամ սեպտեմբերի սկիզբը՝  
15 — 18 սանտիմետր խորությամբ:

2. Աշնան վարը ցաքանել չի  
հարկավոր:

3. Գարնանը անհրաժեշտ ե ցա-  
քանել վորքան կարելի յե վաղ,  
բայց համենայն դեպս այն ժա-  
մանակ, յերբ հողն այլևս չի կպչում,  
այլ ցաքանելու ժամանակ ցըիվ ե  
գալիս:

4. Ցանելուց հենց առաջ վարը  
փափկացնել 5—6 սանտիմետր խո-  
րությամբ:

## V. ՅԵՐԲ ՑԱՆԵԼ ՍՈՅԱՆ

Յուրաքանչյուր շրջանի ցանքսի  
ժամանակի մասին ավելի լավ է  
իմանալ շրջանային փողձակայա-  
նում: Համենայն դեպս պետք է  
ցանել այն ժամանակ, յերբ հողը  
կսկսի տաքանալ:

Շրջաններից մեծ մասի համար  
ցանքի ժամանակն է — մայիսի  
սկզբից մինչև վերջը:

## VI. ԻՆՉՊԵՍ ՑԱՆԵԼ ՍՈՅԱՆ

1. Ցանել միայն շարքացանով:  
Հարավում շարքերի մեջ տարածու-  
թյունը պետք է լինի 45—55 սահ-  
տիմետր, իսկ հյուսիսային շրջան-

ներում (Միլերովո, Վոլոնեժ),  
30—40 սանտիմետր:


2. Շարքերի մեջ բույսերն իրա-  
րից հեռու պետք է լինեն 12—18  
սանտիմետր:

3. Սերմը ցանել միջին չափով  
4—6 սանտիմետր խորությամբ:  
Ավագուս հողերում ավելի խորը՝  
մինչև 6 սանտիմետր, կավային հողե-  
րում — ավելի սաղ՝ 4 սանտիմետր:

4 սանտիմետրից ավելի սաղը  
ցանելը վտանգավոր է: Սերմը կա-  
րող է ընկնել հողի ցամաք շերտե-  
րում կամ ուղղակի արմատները  
կմերկացվեն ուժեղ քամիների ժա-  
մանակ: Խսկ 6 սանտիմետրից խորը  
ցանելու դեպքում ծիլի դժվարու-  
թյամբ կպատճի հողը:



Այս ձեի ցանքսի դեպքում մի  
հեկտարին միջին հաշվով կգնա



Նկ. 6. Սոյայի արմատը գնդիկներով.

45—48 Կիլոգրամ սերմ, իսկ խո-  
շոր հատիկ ունեցող սոյան — մի  
քիչ ավելի:

Մեծահատիկ սոյաները ավելի  
շատ:

## VII. ՀՈՂԻ ՎԱՐԱԿՈՒՄԸ ՍՈՅԱՅԻ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐՈՎ

Սոյայի բերքատվությունը բար-  
ձրանում է, յեթե հողի մեջ կան  
սոյայի արմատների վրա գնդիկ-  
ների մեջ ապրող բակտերիաներ:  
Այն հողերում, վորտեղ սոյան շատ  
ժամանակ չե ինչ մշակվում ե, կամ  
մշակվում ե առաջին անգամ, լավ  
ե հողը վարակել այդ բակտերիա-  
ներով:

### ՎԱՐԱԿՄԱՆ ԶԵՎԵՐԸ

- Վարելահողը փափկացնելուց  
առաջ, նրա վրա հավասարապես ցա-  
նել 1—2 ցենտներ այն դաշտի հո-

զից, վորտեղ առաջ սոյա յե ցանված  
յեղել և վորտեղի սոյան իր արմատ-  
ների վրա գնդիկներ ե ունեցել:  
Փափկացնելուց հենց անմիջապես  
հետո ցանքսն անել: Չպետք ե մո-  
ռանալ, վոր անհրաժեշտ ե վարի  
յերեսին հող ցըիվ տալուց հետո  
անմիջապես գործի դնել այդ ցըիվ  
տված հողը:

2. Բակտերիաների «նիտրագին»  
լուծվածքը լցնել կամ հողի մեջ,  
կամ նրանով թրջել սերմերը: Թէ  
ինչպես ե այդ արվում, այդ մա-  
սին ասվում ե «նիտրագինի» ամեն  
մի սրվակի հետ դրած գրավոր ցուց-  
մունքի մեջ: Յեթե այդպիսի ցուց-  
մունք չկա, պետք ե հարցնել գյու-  
ղատնտեսից:

Բակտերիաներով վարակելը ավե-  
լի հաջող ե կատարվում, յեթե  
սերմերը ավագի հետ խառնված են  
ցանվում— 1 մաս սերմին, 2 մաս  
ավագ (ծավալի չափով):

Այդ դեպքում ցանքսը արվում  
ե զուգորդված ցանիչով (ավագը  
թափվում ե պարարտանյութերի  
արկղը):

### VIII. ՍՈՅԱՅԻ ՑԱՆՔՍԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Սոյայի ծիլերը դուրս են գալիս  
7—12-րդ որը:

1. Յեթե մինչև ծլելը հողի յե-  
րեսը կեղև ե բռնում, այդ դեպ-  
քում պետք ե ցաքանել շարքերի  
հակառակ ուղղությամբ:

2. Փափկացնել շարքերի միջի  
տարածությունը և քաղհանել շար-  
քերը, յերբ սոյան իր իսկական  
տերևների (յեռատերե) 2-րդ զույգը  
կսկսի արձակել:

Այդ աշխատանքն ուշացնել չի  
կարելի:

3. Յեթե սոյան խիտ ե ծլած,  
այդ դեպքում հենց առաջին քաղ-  
հանին պետք ե նոսրացնել այն,  
բույսերի միջի տարածությունը  
դարձնելով 12—18 սանտիմետր։

Յերկրորդ անգամ փափկացնելը,  
իսկ յեթե շարքերի մեջ քաղը շատ  
ե՝ այդ դեպքում և քաղհանը կա-  
տարվում ե ծաղկելուց առաջ, Յեթե  
սոյան կռանում ե մարգերի միջե,  
այլև վոչ մի խնամքի պետք չկա.



Նկ. 7. Սոյայի հասած բույսը

## IX. ՀՈՒՆՁԸ


1. Սոյան հնձվում և այն ժամանակ, յերբ տերևները սկսում են դեղնել, ընկնել, պաճերը գորշ գույն են ընդունում և հատիկները պնդանում են:

2. Հնձի մեքենաներով հնձելու դեպքում դանակները ցած իջեցնել, թե չե ցողունի ներքին մասերը իրանց պաճերով կմնան առանց հնձելու:

3. Կարելի յե հնձել գերանդիով, մանգաղով քաղել:

4. Յերբեք չի կարելի թափահարելով՝ սոյան արմատներով դուրս քաշել — դրանից հողի բերրիությունը պակասում է:

5. Հնձած կամ քաղած սոյան փոքրիկ կույտերով 4—6 որ (նա-



նկ. 8. Սոյայի հատիկները՝ և պատիճները, վո՞րո՞նք՝ վասալել են ակացիայի թրթուներից:

յած յեղանակին) թողնում են չորանալու համար:

## X. ՍՈՅԱՅԻ ԿԱԼՍԵԼԸ

Սոյան կարելի յե թակել շղթա-  
ներով, քարե գլանով (կալը ավելի  
հաստ փոքր, թե չե հատիկները  
ջարդվում են). Իսկ ավելի լավ ե  
կալսել կալսելու մեքենայով, բայց  
այդ գեղքում չմոռանալ իջեցնել  
բարաբանի ընթացքը մինչեւ 400—  
300 պտույտի մի ըոպեյում։

Շատ լավ կալսվում ե սոյան  
արևածաղկի կալսող մեքենաներով։

Թակած սոյան մաքրում են քա-  
մուն տվող մեքենայի, սարտիրով-  
կայի միջոցով։

## XI. ՀԱՏԻԿՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵԼ

1. Հատիկները շտեմարան լցնե-  
լուց առաջ պետք ե լավ չորացնել։

2. Լցնել վոչ հաստ շերտով։

3. Զմեռվա ընթացքում թիակով  
քամուն տալ մի յերկու անգամ  
(իսկ յերեքն և ավելի շատ, յեթե  
հատիկները խոնավ են)։

Ավելի լավ ե անցկացնել քամ-  
հարով, մանավանդ յերբ ձմեռը  
սկսում ե տաքանալ։

4. Պետք ե հետևել, վոր հատիկ-  
ները չտաքանան, առանձնապես  
գարնան սկզբին։

## XII. ՍՈՅԱՅԻ ՏԵՂԸ ՑԱՆՔՍԱՓՈԽՈՒՒ- ԹՅԱՆ ՄԵՋ

1. Ցանքսափոխության մեջ սո-  
յայի ամենահարմար տեղը — դա-  
գարնանացանքսերից (յեզիպտա-



Նկ. 9. Սոյա, վորին վսասել և դաշտային  
թիթեռը:

ցորեն, արևածաղիկ և ուրիշները)  
կամ աշնանացան ցորենից հետո յե:  
2. Առյայից հետո ամենալավ տե-  
ղը ցանքսափոխության մեջ — դա  
գարնանացան և աշնանացան ցո-  
րենների ցանքսն ե։ Աշնանացան  
ցորենի ցանքսը, սոյան հավաքե-  
լուց անմիջապես հետո հնարավոր  
ե այն զբաններում, վորաեղ ցո-  
րենը ուշ ե ցանվում — սեպտեմ-  
բերի վերջերին, հոկտեմբերի սկզբ-  
ան։ Այդ դեպքում դաշտը փիրա-  
ցնում են 5—7 սանտիմետր, ցա-  
քանվում ե և հետո անմիջապես բաց  
ե թողնվում ցանիչը։ Ուրիշ կուլ-  
տուրաներ նույնպես հաջող են  
լինում սոյայից հետո։

### XIII. ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

1. Հանքային պարարտանյութերը բարձրացնում են սոյայի բերքատվությունը՝ միայն ավագուտ, աղերից լվացված և ուրիշ քիչ պտղաբեր հողերում:

2. Ամենից ավելի լավ ազդում են փոսֆորաթթվուտային պարարտանյութերը:

3. Պարարտանյութերը ցրիվ են տալիս ցանքսից առաջ:

### XIV. ՍՈՅԱՅԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Ամենագլխավոր վնասատուները — թիթեռների թրթուռներն են:

1. Ակացիայի թիթեռի թրթուռը (պաճերի միջի սերմերն են ուտում):

2. Առվույտի բվեները (վնասում են տերևներն ու պաճերը):

3. Դաշտային թիթեռը (ուտում են տերևները):

Բացի այս թրթուռներից զգայի վնաս ե հասցնում սարդային տիզը (ծծում ե տերևների հյութը): Սոյան յենթարկվում ե հիվանդությունների, վորոնք առաջ են գալիս սունկերից. տերևների վրայերենում են բծեր: Ցողունից լորձունք ե ծորում: Արմատները փրթում են:

4. Բերքահավաքի և կալսելու  
մեքենաների մասին խոսված է  
IX և X բաժիններում:

Մեխանիզացիայի յենթարկված  
սովորողներում և կոլխոզներում  
սոյայի մշակման համար հաջողու-  
թյամբ կարելի յե գործադրել տրակ-  
տորը: Տրակտորներից այդ նպա-  
տակի համար պիտանի յեն «Ֆար-  
մոլ 10/20» և թրթուռային «Կա-  
տերպիլլար 25/30»:

Շարքամիջերի լայնությունը  
կախված է տրակտորից: Ֆարմո-  
լին կարելի կցել յերկու հատուկ  
ցանիչ, իսկ Կատերպիլլարին — 4:  
Սոյայի բերքահավաքի համար կա-  
րելի յե ոգտվել սովորական կոմ-  
բայնով, միայն թե թմբուկի (բա-

րաբանի) պատվելու արագությունը  
(ընթացքը) պետք է պակասեցվի:  
Հնարավոր է սոյայի մշակույթի  
լիակատար մեխանիզացիան, սա-  
կայն այդ նպատակի համար ան-  
հրաժեշտ մեքենաներն ու գործիք-  
ները դեռ ևս փորձվում են:

## XVI. ԻՆՉՈՐԵՍ ՈԳՏԱԳՈՐԾԵԼ ՍՈ- ՅԱՅԻ ՀԱՏԻԿՆԵՐԸ ՄՆՆԴԻ ՀԱՄԱՐ

Սոյայի հատիկներից զանազան  
ուտելիքներ պատրաստելիս պետք  
է նկատի ունենալ հետևյալը.

Առանց նախորոք թրջելու  
սոյայի հատիկները վատ են  
յեփում, ուստի յեփելուց  
առաջ անհրաժեշտ է նրանց  
թրջել:

Թրջումը կատարվում է 12—24  
ժամ։ Յուրաքանչյուր յերկու բա-  
ժակ հատիկին ավելացնում են մի  
թեփ գդալ աղ և  $\frac{1}{4}$  գդալ սողա։  
Յեփել հարկավոր է միշտ  
թույլ կը ակի վրա։

Կաթը։ Հատիկները խնամքով  
մաքրում են, զտում, լվանում և  
թրջում։ Տոզած հատիկները աղում  
— մանրացնում են կամ տրոբում  
են ջրով (վորքան կարելի յե մանր)։  
Հետո վրան ավելացնում են այն-  
քան ջուր, վորի քանակը իր քաշով  
8 անգամ ավելի լինի վերցրած  
հատիկից։ Յուրաքանչյուր 100 գրամ  
հատիկին ավելացնում են 10 գրամ  
շաքար։ Այդ խառնուրդը տաքաց-  
նում են մինչև  $70^{\circ}$  (բայց չհաս-

յնելով յեռացման), քամում են  
քաթանով — և կաթը պատրաստ է։  
Այդպիսի ձևով պատրաստված  
կաթը գործածում են կաշաների  
համար, հացի մեջ (խմորի մեջ)։  
Նա հասուկ հոտ ունի (հում սի-  
սեռի) և այդ պատճառով քիչ ե  
գործածվում, իբրև կաթ։ Սոյայի  
կաթը՝ մեծ մասամբ գործադրվում  
է հորթերին և խոզուկներին կե-  
րակրելու համար։

Լապշա։ — Սոյայի յեփած հա-  
տիկները տրոլում են մաղի միջով։  
Տրոլված մասսան շաղաղում են  
փոքր քանակի կաթով, կտրատում  
են բարակ շերտերի և չորացնում  
են։ Գործածվում է, ինչպես սովո-  
րական լապշան։

Կոտլետ: — Հատիկները թրջում  
են 12 ժամվա ընթացքում: Յե-  
փում են ջրի մեջ, ավելացնելով  
մի քիչ սողա: Անցկացնում են  
մսաղացով: Ավելացնում են  $\frac{1}{3}$  մասի  
չափ հաց և 1 ձոր յուրաքանչյուր  
կոտլետին: Տապակում են, ինչպես  
սովորական կոտլետները:

Կաշա: — Յեփելուց հետո հա-  
տիկները տրորում են: Ավելացնում  
են 2 մաս կարտոֆել (1 մասին):  
Այդ խառնուրդին ավելացնում են  
սոխ և աղ:

Սիսեռ: — Սոյայի չհասունա-  
ցած կանաչ հատիկները գործած-  
վում են զանազան կերակուրների  
համար, իբրև սովորական կանաչ  
սիսեռ:

Սուրճը: — Հատիկները խնամ-  
քով լվանում են, թրջում, ապա  
չորացնում և բովում են մինչև  
մութ՝ կինեմոնագույն դառնալը:  
Աղում են սրճաղացով կամ ծեծում  
են հավանգի մեջ: Աղալու ժամա-  
նակ, ավելի համեղացնելու համար,  
ավելացնում են  $\frac{1}{10}$  մասի չափ  
խակական սուրճ և  $\frac{1}{7}$ -ի չափ — ցի-  
կորի: Կարելի յե հատիկները և  
չթրջել, այլ միայն լվանալ և բովել:  
Ալյուր: — Հատիկների հասա-  
րակ աղալը տալիս և շուտ փչա-  
ցող ալյուր: Այդպիսի ալյուրը շուտ  
և դառնանում, ուսաի և պետք ե  
նրան շուտով գործադրել: Այդ ալ-  
յուրը  $\frac{1}{6} - \frac{1}{5}$  մասի չափ ավելա-  
ցնում են ցորենի կամ հաճարի

ալյուրին: Այդպիսի ալյուրից (իսառ-  
նուրդից) թխված հացը ավելի  
սննդարար է և ավելի յերկար ե  
դիմանում:

Այն բոլոր ուտելիքները, վորոնք  
կարելի յե պատրաստել սոյայից,  
իրենց սննդարարությամբ հաջո-  
ղությամբ փոխարինում են մսեղեն  
իրակուքները: Իսկ վորովհետե  
սոյայի հատիկները իրենց մեջ շատ  
յուղ են պարունակում, այդ հա-  
տիկներից կերակուր պատրաստե-  
լիս կարելի յե յուղ չափելացնել  
կամ ավելացնել փոքր քանակով:

Главлит А 72788 Заказ 238 Тираж 4000 экз.

Книжная ф-ка Центриздата Народов СССР.  
Москва, Шлюзовая набережная, 10.

ՀՀ Ազգային գրադարան



NL0282623

5 ЧПФ. 14292  
14593 18.964  
С. Х. 9.



---

П. ГАЛЬЦЕВ  
Что надо знать  
о сое

(Перевод с русского)

---

На армянском языке

633.3  
4-21

---

ЦЕНТРИЗДАТ НАРОДОВ СССР.  
Москва, центр, Никольская, 10.